<u>Կամպուսի ներսում գործող ծառայություններ՝</u>

- Մտավոր և ֆիզիկական առողջության խորհրդատվություն. Վերդուգո Կամպուսի Առողջության Կենտրոն, Սան Ռաֆայել շենքի առաջին հարկ, հեռ.՝ (818) 240- 1000, ներքին համար՝ 5909
- Մտավոր առողջության խորհրդատվություն. Գարֆիլդ Կամպուս, Մարիպոզա շենք, 221 սենյակ, հեռ.՝ (818) 240-1000, ներքին համար՝5055
- Մուտքի արտոնագրի/ներգաղթի կենտրոն. Վերդուգո Կամպուս, Սան Ռաֆայել շենքի երկրորդ հարկ, հեռ.՝ 818 240-1000, ներքին համար՝ 5439, 6645 և 5440
- Ուսանողների ֆինանսական աջակցության կենտրոն. Վերդուգո Կամպուս, Սան Ֆերնանդո համալիր, 110 սենյակ, հեռ.՝ 818 240-1000, ներքին համար՝ 5916

<u>Կամպուսից դուրս գործող ծառայություններ՝</u>

- Խաղաղություն՝ բռնության դեմ (626) 793-3385 (Վեսթ Սան Գաբրել հովիտ) (West San Gabriel Valley)
- Իսթ Լոս Անջելեսի կանանց՝ բռնաբարության և ծեծի ենթարկելու հարցերով կենտրոնի թեժ գիծ՝ (800) 585-6231
- Գլենդելի YWCA՝ ընտանեկան բռնության հարցերով թեժ գիծ՝ (818) 242-1106
- RAINN- Բռնաբարություն/Չարաշահում/Ինցեստ/ Ազգային ցանցի թեժ գիծ՝ (800) 656-4673
- Կալիֆորնիայի կոալիցիան՝ ընդդեմ սեռական ոտնձգությունների, թեժ գիծ՝ (916) 446-2520
- Լոս Անջելեսի վարչաշրջանային դատախազի՝ հանցագործությունից տուժածների աջակցման ծրագիր՝ (800) 380-3811
- Ազգային ընտանեկան բռնության հարցերով թեժ գիծ՝ (800) 799-7233

## ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ/ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տուժածի խնդրանքով հնարավոր է բնակարանային ապահովում կամ պաշտպանական միջոցառումներ ձեռնարկել, եթե դրանք ողջամտորեն հասանելի են՝ անկախ այն փաստից, թե արդյո՞ք բռնության զոհը նախընտրում է հանցագործության մասին հայտնել կամպուսի ոստիկանությանը, թե՞՝ տեղի իրավապահ մարմիններին:

- Ուսանողների ակադեմիական դրության փոփոխության հայտի համար՝ ուսանողական ծառայությունների հարցերով նախագահի տեղակալ՝ (818) 240-1000, ներքին համար՝ 5130
- Աշխատողների աշխատանքային դրության փոփոխության հայտի համար՝ մարդկային ռեսուրսների կառավարիչ (818) 240-1000, ներքին՝ 5165

## ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ

Գլենդելի Համայնքի Թաղամասային Քոլեջը հանձն է առնում ինստիտուցիոնալ կարգապահական վարույթի համար ապահովել արագ, արդար և անկողմնակալ ընթացակարգ՝ նախնական հարցաքննությունից մինչև վերջնական արդյունք: Կարգապահական վարույթները կիրառելի են և՛ ուսանողների, և՛ աշխատողների համար: Բոլոր ընթացակարգերը, քայլերը և որոշում կայացնելու գործընթացները կհամապատասխանեն բոլոր կարևոր կանոնադրություններին, կարգադրություններին և խմբակային բանակցության համաձայնագրերին: Ընթացակարգերի վարումը տեղի կունենա այն աշխատակիցների կողմից, ովքեր տարեկան վերապատրաստություն են անցնում այս հանցագործություններին վերաբերող խնդիրների շուրջ, և չկա որևէ շահերի բախում կամ կողմնակալություն՝ ի օգուտ կամ ընդդեմ մեղադրողի կամ մեղադրյալի:

Անհրաժեշտ է վարել ընթացակարգն այնպես, որ այն՝

- համապատասխանի քոլեջի քաղաքականությանը և լինի թափանցիկ՝ մեղադրողի և մեղադրյալի համար
- ներառի ժամանակին ուղարկված ծանուցագիր այն հանդիպումների մասին, որին մեղադրողը կամ մեղադրյալը կամ երկուսն էլ կարող են ներկա լինել
- ապահովի մեղադրողի, մեղադրյալի և համապատասխան պաշտոնյայի համար ժամանակին և հավասար մատչելիություն՝ցանկացած տեղեկությանը, որը կօգտագործվի թե՛ ոչ պաշտոնական, թե՛ պաշտոնական կարգապահական վարույթների հանդիպումների և լսումների ընթացքում
- ապահովի ընթացակարգերին ներկա գտնվելու նույն հնարավորությունները այլ անձանց համար
- մեղադրողի կամ մեղադրյալի խորհրդականի հարցում սահմանափակումներ չունենա
- միաժամանակ տրամադրում է գրավոր ծանուցում հետևյալի մասին՝
    - ցանկացած ինստիտուցիոնալ կարգապահական վարույթի արդյունք, որը ծագել է մեղադրանքից
    - ինստիտուտի ընթացակարգերը՝ ինստիտուցիոնալ կարգապահական վարույթի արդյունքը մեղադրյալի և տուժածի կողմից բողոքարկելու համար, եթե այսպիսի ընթացակարգեր առկա են
    - արդյունքի որևէ փոփոխություն
    - երբ այս արդյունքները դառնում են վերջնական

## ԱՊԱՑՈՒՅՑԻ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Ինստիտուցիոնալ կարգապահական վարույթի լսումների ընթացքում օգտագործվող չափանիշը կլինի «ապացույցի գերակշռում» չափանիշը: Այս սահմանումը նույնն է, ինչը որ օգտագործվում է շատ քաղաքացիական դատարաններում, և ողջամիտ կասկածից վեր չափանիշ չէ: Ապացույցի գերակշռումը նշանակում է, որ իրավախախտումը ավելի հավանական է, որ կատարվել է, քան թե՝ չի կատարվել, այսինքն՝ հավանականությունը 50%-ից ավել է:

## ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐ

Ընտանեկան բռնության, ժամադրության ընթացքում բռնության, սեռական ոտնձգության և հետապնդման վերաբերյալ ինստիտուցիոնալ կարգապահական վարույթի վերջնական որոշումից հետո վարչաշրջանը կարող է պատժամիջոցներ կիրառել: Հնարավոր պատժամիջոցները ներառում են՝

Ուսանողների համար՝

- նկատողություն
- առավելություններից զրկում
- հատուցում
- դասից հեռացում
- վարչական պահումներ
- վճարումների դադարեցում
- հեռացում

Աշխատողների համար՝

- դադարեցում՝ առանց վճարման
- պաշտոնի իջեցում՝ որակավորումից ավելի ցածր կարգի
- միևնույն կարգի մեջ աշխատավարձի կրճատում և/կամ՝
- աշխատանքից հեռացում

## ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Բոլոր ողջամիտ և հասանելի պաշտպանական միջոցառումները կարող են տրամադրվել բռնությունից տուժածին՝իր խնդրանքով՝ անկախ այն փաստից, թե արդյո՞ք տուժածը նախընտրում է հանցագործության մասին հայտնել կամպուսի ոստիկանությանը, թե՞՝ տեղական իրավապահ մարմիններին: Պաշտպանական միջոցառումները կարող են ներառել՝

- անվտանգության ուղեկիցներ
- տալով «ոչ մի կոնտակտ» կարգադրությունը
- իրավախախտ երրորդ կողմի անձանց մուտքի կանխարգելում
- հարմարեցնելով դասի վայրը/գրաֆիկը և/կամ՝
- հարմարեցնելով աշխատանքի գրասենյակի վայրը/գրաֆիկը

## ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄՆԵՐ

Եթե քոլեջը հարցաքննության ընթացքում հայտնաբերած փաստերի արդյունքում նշանակում է կարգապահության խստացում ուսանողի կամ աշխատակցի նկատմամբ, ապա ուսանողը կամ աշխատակիցը կարող են բողոքարկել այդ որոշումը՝ օգտագործելով կարգապահական որոշման բողոքարկման կանոնադրությունը:

## ՈՐՏԵՂ ԵՎ ԻՆՉՊԵՍ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ

Կարգապահական բողոքարկումները կարող են ներկայացվել՝

- Մարդկային Ռեսուրսների Կառավարչին, Վերդուգո կամպուս, (818) 240-1000, ներքին համար՝ 5165
- Հոդված IX համակարգողին, Վերդուգո կամպուս վարչական շենք., 125 սենյակ, (818) 240-1000 ներքին՝ 5130

GLENDALE COMMUNITY COLLEGE



# ԳԼԵՆԴԵԼԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՔՈԼԵՋ

## *Ժամադրության ընթացքում բռնության, ընտանեկան բռնության, սեռական ոտնձգության և հետապնդման քաղաքականություն, գործընթացներ, իրավունքներ և տեղեկություններ*

1500 N. Verdugo Road
Glendale, CA 91208

(818) 240-1000 · www.glendale.edu

## ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Համաձայն կամպուսի՝ սեռական և այլ բնույթի ոտնձգությունների մասին Խորհրդի քաղաքականության եւ թիվ 3540 վարչական կանոնակարգի, Գլենդելի Համայնքային Քոլեջը արգելում է ժամադրության ընթացքում բռնությունը, ընտանեկան բռնությունը, սեռական ոտնձգությունը և հետապնդումը: Այս հանցանքները ոտնահարում են վարչաշրջանի քաղականությունն ու կանոնակարգերը և ենթակա են բոլոր կիրառելի պատիժներին, ներառյալ քրեական ընթացակարգերը և աշխատակցի կամ ուսանողի կարգապահական վարույթները:

## ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԳՐԱՎՈՐ ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Երբ ուսանողը կամ աշխատակիցը զեկուցում է քոլեջին, որ ուսանողը կամ աշխատակիցը ընտանեկան բռնության, ժամադրության ընթացքում բռնության, սեռական ոտնձգության կամ հետապնդման զոհ է դարձել, անկախ այն բանից, թե հանցանքը տեղի է ունեցել կամպուսի ներսում, թե՝ կամպուսից դուրս, ապա քոլեջը ուսանողին կամ աշխատողին տրամադրում է ուսանողի կամ աշխատողի իրավունքների ու հնարավոր տարբերակների վերաբերյալ գրավոր տեղեկանք, ինչպես նկարագրված է ստորև.

## ԴՐՈՒՅԹՆԵՐ

***Սեռական ոտնձգություն.*** Նշանակում է՝ ցանկացած չփոխհամաձայնեցված սեռական գործողություն, ներառյալ այն գործողությունները, որոնց համաձայնեցման համար տուժածը ունակությունից զուրկ է:

***Համաձայնություն (սեռական գործողությունների վերաբերյալ):*** Կալիֆորնիայում համաձայնությունը նշանակում է «հաստատապես համաձայնեցում»: Հաստատապես համաձայնեցումը նշանակում է վճռական, գիտակցական և կամավոր համաձայնություն՝ սեռական ակտում ներգրավվելու համար: Սեռական ակտի մեջ ներգրավված յուրաքանչյուր անձի պատասխանատվությունն է՝ վստահ լինել մյուս անձի կամ անձանց հաստատապես համաձայնեցումը ձեռք բերելու համար՝ սեռական ակտում ներգրավվելու նպատակով:

***Ընտանեկան բռնություն:*** Ցանկացած անձ, ով միտումնավոր կերպով մարմնական փասավածք է պատճառում, որի արդյունքում տուժածը հայտնվում է տրավմատիկ վիճակում. Տուժածը կարող է հանդիսանալ կամ հանդիսանում էր իրավախախտի կինը (ամուսինը) կամ նախկին կինը (ամուսինը), կենակիցը կամ նախկին կենակիցը, նշանածը կամ մեկը, ում հետ նշանված է եղել կամ ժամադրվել/հանդիպել է, իրավախախտի երեխայի մայրը կամ հայրը:

***Ժամադրության ընթացքում բռնություն:*** Երբ բռնությունը կատարվել է այն անձի դեմ, ով հանդես է գալիս որպես կին (ամուսին), մեղադրյալի հետ համատեղ կենակցող անձ, մեղադրյալի երեխայի ծնող, նախկին կին (ամուսին), նշանած կամ անձ, ում հետ մեղադրյալը ներկայումս ունի կամ նախկինում գտնվել է ժամադրության կամ նշանադրության հարաբերությունների մեջ:

***Հետապնդում.*** Ցանկացած անձ, ով միտումնավոր, չարամիտ կերպով և շարունակաբար հետևում կամ՝ միտումնավոր և չարամիտ կերպով անհանգստացնում է այլ անձի և զգալի վախ պատճառելու մտադրությամբ՝ հիմնավոր սպառնալիք է ներկայացնում այլ անձի կամ նրա անմիջական ընտանիքի անդամների անվտանգության համար, մեղավոր է հետապնդման հանցանքի մեջ:

## ԿՈՂՄՆԱԿԻ ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Կողմնակի միջամտությունը սահմանվում է՝ որպես անվտանգ եւ դրական տարբերակ, որը անձը կամ անձինք կարող են իրականացնել՝ կանխելու վնասը կամ միջամտելու ժամադրության ընթացքում բռնության, ընտանեկան բռնության, սեռական ոտնձգության կամ հետապնդման վտանգի դեպքում:

- Կողմնակի մարդիկ պետք է տեսնեն տեղի ունեցող միջադեպը և գնահատեն իրավիճակը՝ որոշելու համար՝ արդյո՞ք այն արտակարգ իրավիճակ է, թե՝ ոչ:
- Որոշե՛ք՝ արդյո՞ք ինչ-որ մեկը օգնության կարիք ունի:
- Պատասխանատվություն ստանձնե՛ք: Պատրա՛ստ եղեք միջամտելու, նույնիսկ եթե ուրիշները դա չանեն:
- Բարձրաձայնե՛ք, երբ տեսնում եք, որ ինչ-որ մեկը միտումնավոր կերպով արբեցնում է մյուսին:
- Բարձրաձայնե՛ք, երբ տեսնում եք, որ Ձեր ընկերը լքում է մեկի հետ, ում նա գիտի, որ խմած է:
- Հիշեցրե՛ք ընկերներին, որ հարբած անձի հետ սեռական շփումը օրենքով արգելվում է:
- Օգնության փորձ արե՛ք: Այն կարող է ներառել՝ օգնել անձին լքել իրավիճակը, դիմակայել որոշկի վարքգծի, ընդլայնել իրավիճակը կամ կանչել ուրիշներին՝ աջակցության/անվտանգության համար:
- Հարգանքով վերաբերվե՛ք ամենքին: Խուսափե՛ք բռնություն գործադրելուց: Հնարավորության դեպքում՝ ազնիվ և ամնիջական եղեք: Անհրաժեշտության դեպքում օգնություն կանչե՛ք: Ձեզ ապահով պահե՛ք: Ոստիկանություն կանչե՛ք, երբ զգաք, որ դրա կարիքը կա:
- Եթե որոշեք միջամտել, ուշադրությունը շեղելը կամ զվարճացնելը կարող են կենսունակ ռազմավարություններ լինել, որոնք կարող են ետ պահել ահաբեկողին՝ իր շարունակական գործողություններից:

## ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՈՒՄ

Ռիսկի նվազեցումը ներառում է տարբերակներ, որոնք նախատեսված են նվազեցնել իրավախախտումներ կատարելը կամ կողմնակի անձանց անգործությունը, հզորացնելու տուժածերին, որպեսզի նպաստեն նրանց ապահովությանը, և օգնել անհատներին և համայնքներին՝ անդրադառնալու բռնությանը նպաստող դրույթներին:

- Դասերին հաճախելիս քայլե՛ք ընկերների կամ ուրիշների հետ: Ուղեկից խնդրելու համար զանգահարե՛ք քոլեջի ոստիկանություն՝ (818) 551-5205 հեռախոսահամարով:
- Ուշադի՛ր եղեք Ձեր շրջակայքի նկատմամբ: Քայլելիս մի՛ կենտրոնացեք Ձեր հեռախոսի վրա կամ հաղորդագրություններ մի՛ ուղարկեք:
- Ձեր մեքենայի բանալիները պատրա՛ստ պահեք: Մի՛ կենտրոնացրեք Ձեր ուշադրությունը Ձեր դրամապանակի կամ ուսապարկի մեջ փնտրտուքների վրա: Ստուգե՛ք Ձեր հետնի նստատեղը՝ մինչ մեքենան նստելը:
- Մի՛ նստեք այն անձանց մեքենան, ովքեր կառաջարկեն հասցնել Ձեզ ետ կայանատեղի՝ Ձեր մեքենայի մոտ: Մի՛ վերցրեք մարդկանց՝ նրանց իրենց կայանատեղի հասցնելու համար:
- Ժամադրության վաղ փուլերում հաշվի առե՛ք գնալ այն խմբի մարդկանց հետ, ում ճանաչում եք: Գնացե՛ք ընկերոջ հետ և պատասխանատու՛ եղեք միմյանց հանդեպ: Նախօրոք ծրագրած ազդանշան ունեցեք, որով ընկերոջը կտեղեկացնեք, որ ցանկանում եք լքել կամ՝ օգնության կարիք ունեք:
- Ժամադրության գնալիս նկատի ունեցեք՝ ընկերոջը տեղյակ պահել, թե ում հետ եք ժամադրվել, ուր եք գնում և երբ եք մտադիր վերադառնալ:
- Հստակ և հաճախակի հաղորդակցվե՛ք Ձեր զուգընկերոջ հետ:
- Կառավարե՛ք Ձեր ալկոհոլի օգտագործումը. թույլ մի՛ տվեք, որ այն Ձեզ կառավարի: Խմե՛ք պատասխանատվության զգացումով կամ՝ ընդհանրապես մի՛ խմեք: Մի՛ օգտագործեք նյութեր, որոնք կարող են խաթարել Ձեր պարզորոշ մտածելու կամ արագորեն գործելու ունակությունը:
- Պատրաստակամ և ի վիճակի եղեք ասելու՝ «Ո՛չ»:
- Երբեք ուշ չէ ասել «Ո՛չ» :
- Մի՛ շփոթվեք կամ ամաչեք ասել «Ո՛չ» կամ ընդհատել ինչ-որ մեկին:
- Բառերով արտահայտե՛ք Ձեր սպասելիքները Ձեր ժամադրության ժամանակ: Խոսե՛ք սահմանների մասին:
- Վստահե՛ք Ձեր բնազդին: Հսկե՛ք Ձեր անձնական տարածքը: Եթե ինչ-որ մեկը Ձեզ ստիպում է անհարմար զգալ, դու՛րս եկեք իրավիճակից:

## ԲՌՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԴԵՊԻՑ ՀԵՏՈ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻՆ ՀԵՏևԵԼԸ

- Ապահով տեղ գնացե՛ք:
- Ստացե՛ք անհրաժեշտ բժշկական օգնություն:
- Ժամանակը կարևոր գործոն է ապացույցի պահպանման համար, որը օգտակար կլինի հանցանքն ապացուցելիս կամ պաշտպանություն ստանալիս:
- Մի՛ լվացեք ձեր ձեռքերը, մի լողացե՛ք, զուգարանից մի՛ օգտվեք, ատամները մի՛ մաքրեք և ոչինչ մի՛ խմեք՝ մինչև բուժզննումը կամ ապացույցներ հավաքելը:
- Մնացե՛ք բռնության ընթացքում ունեցած Ձեր հագուստով կամ՝ դրե՛ք հագուստը թղթե (ոչ պլաստիկ) տոպրակի մեջ՝ այնպես, որ այն հնարավոր լինի որպես ապացույց օգտագործել:
- Մի՛ մաքրեք կամ կարգի բերեք այն տարածքը, որտեղ տեղի է ունեցել միջադեպը:
- Նշե՛ք այն մարդկանց անունները, նկարագրե՛ք նրանց, ովքեր հնարավոր ականատես են եղել, ներկա են գտնվել տարածքում կամ կատարված բռնության մասին տեղյակ են:

## ՈՒՄ ՀԱՂՈՐԴԵԼ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Այս հանցագործությունները պետք է անմիջապես հաղորդվեն Քոլեջի Ոստիկանության բաժին՝ (818) 409-5911 հեռախոսահամարով, կամ՝ տեղի իրավապահ մարմիններին՝ զանգահարելով 911: Կարող եք հաղորդել հանցանքի մասին նաև՝

- Ուսանողների հարցերով դեկանին՝ (818) 240-1000, ներքին համար՝ 5594
- Հոդված IX համակարգողին՝ (818) 240-1000, ներքին՝ 5130
- Առողջապահական ծառայությունների ծրագրերի ղեկավարին՝ (818) 240-1000, ներքին՝ 5189
- Ուսանողական ծառայությունների գծով դեկանին՝ (818) 240-1000, ներքին համար՝ 5195
- Մարդկային ռեսուրսների կառավարչին՝ (818) 240-1000 ներքին համար՝ 5165
- Մասնագիտական զարգացման կենտրոնի ծրագրի տնօրենին՝ (818) 957-0024
- Վարչական դեկանին, աշխատուժի զարգացման, շարունակական և համայնքային կրթության Գարֆիլդի կամպուս՝(818) 240-1000, ներքին համար՝ 5018

Տուժածի խնդրանքով՝ քոլեջի անձնակազմը կաջակցի նրան՝ տեղեկացնելով համապատասխան իրավապահ մարմիններին: Ոստիկանական զեկույց ներկայացնելը չի պարտադրելու տուժածին դատական կարգով հետապնդել: Տուժածը հնարավորություն ունի նաև մերժել տվյալ մարմիններին ծանուցելը:

## ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՔՐԵԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ ԵՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԻՑ ՏՈՒԺԱԾՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Կիրառելիության դեպքում՝ տուժածը կարող է իրավունք ունենալ ծանուցված լինելու քրեական, քաղաքացիական կամ անչափահասների ատյանի կամ քոլեջի կողմից տրված պաշտպանական հրամաններիո, կապ չհաստատելու կամ նմանատիպ օրինական կարգերի մասին:

- Դատական պաշտոնյայի կողմից տրված արտակարգ պաշտպանական հրամաններ՝ խաղաղապահ աշխատակցի խնդրանքի դեպքում
- Ժամանակավոր ձերբակալության հրամաններ՝ տրված Լոս Անջելեսի վարչաշրջանի վերին ատյանի կողմից - 600 E. Broadway, room 279, Glendale, CA 91206, (818) 265-6497
- Քրեական հետապնդում. Լոս Անջելեսի վարչաշրջանի դատախազի գրասենյակ, 600 E. Broadway, room 280, Glendale, CA 91206, (818) 500-3593
- Քաղաքացիական հետապնդում: Լոս Անջելեսի վարչաշրջանի վերին ատյանի քաղաքացիական բաժին՝ 600 E. Broadway, room 279, Glendale, CA 91206, (818) 265-6497
- Հանցագործությունից տուժածների իրավունքները. հանցագործությունից տուժածները ունեն շատ իրավունքներ՝ ողջ քրեական արդարադատության համակարգում: Հետագա տեղեկատվություն կարելի է ձեռք բերել Լոս Անջելեսի վարչաշրջանային դատախազի գրասենյակից՝ 600 E. Broadway, room 280, Glendale, CA 91206, (818) 500-3593
- Կամպուսի պաշտպանական կարգադրություններ. քոլեջը կարող է միջոցներ ձեռնարկել՝ պաշտպանելու բողոք ներկայացնողին, ով հաղորդում է այդ հանցագործություններից տուժած լինելու մասին: Կա՛պ հաստատեք Հոդված IX համակարգողի հետ՝ (818) 240-1000 ext. 5130 և/կամ Մարդկային ռեսուրսների կառավարչի հետ (818) 240-1000, ներքին համար՝ 5165

## ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Գլենդելի համայնքային քոլեջը կպահպանի ընտանեկան բռնության, ժամադրության ընթացքում բռնության, սեռական ոտնձգության կամ վարչաշրջանային գույքի հետապնդման ցանկացած ենթադրյալ զոհի կամ վկայի կամ երրորդ զեկուցող կողմի ինքնությունը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ենթադրյալ զոհը կամ վկան, կամ երրորդ զեկուցող կողմը մասնավորապես հրաժարվում են այդ գաղտնիության իրավունքից:

## ԿԱՄՊՈՒՍԻ ՆԵՐՍՈՒՄ և ԿԱՄՊՈՒՍԻՑ ԴՈՒՐՍ ԳՈՐԾՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հանցագործությունից տուժածների համար գործում են ծառայություններ և՛ քոլեջի ներսում, և՛ համայնքում: